ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԼԵՆՈՒՂՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

0926 Արմավիրի մարզի, գ. Լենուղի, Հեռ.:/0237/6-91-98 էլ.փոստ lenughi.armavir@mta.gov.am; lenuxi6sovxoz@mail.ru

Թիվ 0-37 03-03-2020թ.

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ՝
Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ներկայացնում ենք, Արմավիրի մարզի Լենուղի համայնքի ավագանու 2020թ. փետրվարի 28-ի թիվ 1 նիստի թիվ 6-Ն որոշումը համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ 8 նիստի թիվ 32-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:

*Առդիր՝ 49 էջ*

ԼԵՆՈՒՂՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ ԱՄ-04894-2020
06 03 2020

49

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԼԵՆՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

28-ը փետրվարի 2020թ. Թիվ-6 Ն
Գ.ԼԵՆՈՒՂԻ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ-8 ՆԻՍՏԻ 2020թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N-32-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասով և 33-րդ հոդվածի 4-րդ մասով Լենուղի համայնքի ավագանին

*ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լենուղի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լենուղի համայնքի 2020թ.բյուջեն հաստատելու մասին» թիվ 32-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություն և լրացումները՝ համաձայն հավելվածի:

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական օրվան հաջորդող հրապարակման տասներորդ օրը:*

Ավագանու անդամներ՝ ԿՈՂՄ

Ն. Կոստանյան
Գ. Սարգսյան
Վ. Հունանյան
Ա. Ֆեսիլյան
Գ. Ծատուրյան
Ռ. Ալեքսանյան
Ս. Կարապետյան

ԼԵՆՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

2020թ.28-ը փետրվարի
Գ.Լենուղի

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի ԹԻՎ-1
ՆԻՍՏԻ ԹԻՎ-6-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ-8 ՆԻՍՏԻ N-32-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**1.** Հաստատել համայնքի բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ ընդամենը 3122.1 հազար դրամ՝
այդ թվում համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ 755.0 հազար դրամ, ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ 2367.1 հազար դրամ:

**2.** Համայնքի բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդը 755.0 հազար դրամը ենթակա է մուտքագրման ֆոնդային բյուջե
Բյուջեի ծախսային մասով՝
01 բաժնի 6 խումբ 1 դասում 5129 հոդվածն ավելացնել 2100.0 հազար դրամով
06 բաժնի 3 խումբ 1 դասում 5113 հոդվածը ավելացնել 722.1 հազար դրամով
06 բաժնի 3 խումբ 1 դասում 5129 հոդվածը ավելացնել 300.0 հազար դրամով

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 32_Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ «28» «02» N 6 -Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լենուղի համայնքի ավագանու 2020 թվականի «28» «02»-ի « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լենուղի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լենուղի համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 32-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 6-Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի պահանջով, և դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է համայնքի զարգացմանը նպաստելուն՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

Քանի որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լենուղի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լենուղի համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 32-Ն որոշումը կրում է նորմատիվ իրավական բնույթ, ապա «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լենուղի համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լենուղի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 32-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լենուղի համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լենուղի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 32-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն**